ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 29 >> հուլիսի 2013թվականի N 85 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբերի 02-ի <<Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող ակտիվների և պարտավորությունների ամենամյա գույքագրում կատարելու մասին>> N 27 կարգադրությամբ ստեղծված գույքագրման հանձնաժողովների ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ կազմած փաստաթղթերը՝ **համայնքի ավագանին որոշում է**.

1. Հաստատել Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հիմնական միջոցների ցանկը՝ համաձայն N 1 ցուցակի:

2. Հաստատել Գյումրի համայնքի հաշվեկշռում գտնվող, սակայն մինչև 2012 թվականի հոկտեմբերի 10-ի դրությամբ օտարված, նվիրատվությամբ տրված, գոյություն չունեցող հիմնական միջոցների ցանկը՝ համաձայն N 2 ցուցակի:

3. Թույլատրել՝ ֆինանսատնտեսագիտական բաժնին համայնքի հաշվեկշռից դուրս գրելու N 2 ցուցակում ընդգրկված՝ օտարված, նվիրատվությամբ տրված, գոյություն չունեցող հիմնական միջոցները:

4. Հաստատել Գյումրի համայնքի հաշվեկշռում գտնվող անավարտ շինությունների ցանկը՝ համաձայն N 3 ցուցակի:

5. Հաստատել Գյումրի համայնքի հաշվեկշռում գտնվող, սակայն ուսումնասիրությունների արդյունքում չպարզված հիմնական միջոցները՝ համաձայն N 4 ցուցակի:

6. Գյումրի համայնքի հաշվեկշռում գտնվող չպարզված և անավարտ հիմնական միջոցների հետագա կարգավիճակը պարզելու նպատակով ստեղծել հանձնաժողովներ՝ քաղաքապետարանի համապատասխան բաժինների աշխատակիցների և ավագանու բոլոր անդամների մասնակցությամբ, անցնակցնել լրացուցիչ ուսումնասիրություններ և արդյունքները ներկայացնել ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Կողմ (19) Դեմ(0) Ձեռնպահ(0)

Ա.Ադամյան_____

Գ.Ադամյան _____

Ա.Բաղեյան _____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան_____

Ա.Գրիգորյան _____

Գ.Թաթարյան _____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ.Հունանյան _____

Ն.Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

Տ.Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2013թ. հուլիսի 29
ք.Գյումրի